Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ԵՀ-2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2019 թվական, հուլիսի 31, ժամը՝ 15:00

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Զարուհի Բաթոյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Համլետ Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ և Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող անձինք՝

Արման Ուդումյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ Զարուհի Բաթոյանի մշտական փոխարինող)
Քրիստինա Գյուրջյան	Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետի պաշտոնակատար (Հանձնաժողովի անդամ Առողջապահության նախարարի տեղակալ Լևոն Հակոբյանի մշտական փոխարինող)
Անահիտ Անտոնյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ (Արդարադատության նախարարությունից Հանձնաժողովի անդամի մշտական փոխարինող)
Գևորգ Մամիկոնյան	Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության և զարգացման վարչության առաջատար մասնագետ (Էկոնոմիկայի նախարարությունից Հանձնաժողովի անդամի փոխարեն)
Արթուր Հովհաննիսյան	«Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի փաստաբան (Հանձնաժողովի անդամ Սեդրակ Ասատրյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ՝

Ժաննա Անդրեասյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժորա Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Արման Սարգսյան	«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Համբարձում Մինասյան	ԱՍՀՆ միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ
Երանուհի Յայլախանյան	ԱՍՀՆ հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ
Սոֆի Բոստանչյան	ԱՍՀՆ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի

	վարչության կանանց հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ
Անուշ Ներսիսյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մամլո խոսնակ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Լևոն Հակոբյան	Առողջապահության նախարարի տեղակալ
Սեդրակ Ասատրյան	«Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի տնօրեն
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Կարինե Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Զարուհի Բաթոյանը, ողջունելով ներկաներին, առաջարկեց քննարկել նիստի օրակարգը հաստատելու հարցը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանն առաջարկեց փոխել Հանձնաժողովի անդամներին նախապես ուղարկված օրակարգի նախագծի հարցերի հերթականությունը և առաջինը ներկայացնել ՀՀ-ում Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագիծը:

Հանձնաժողովի նիստի օրակարգի «Այլ հարցեր» կետի շրջանակներում Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանի կողմից ներկայացվեցին հետևյալ հարցերը.

- Ա. Ասատրյանը անդրադարձավ մասնավորապես Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում ամրագրված այն դրույթին, որով նախատեսվում է, որ կողմերը պարտավորվում են աջակցել արհեստակցական կազմակերպություններ ստեղծելուն և զարգացնելուն: Ա. Ասատրյանը նշեց, որ ոլորտում կան լուրջ խնդիրներ մասնավորապես արհմիությունների իրավունքների պաշտպանության, մարզերում արհմիությունների գրեթե բացակայության հետ: Այս հարցերի շրջանակներում վերջինիս կարծիքով կարևոր է համապատասխան պաշտոնատար անձանց, առհասարակ հասարակության շրջանում արհմիությունների դերի, կոլեկտիվ բանակցությունների, աշխատանքի ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների մասին իրազեկման աշխատանքների իրականացումը: Որպես այդ առնչությամբ իրականացվելիք քայլ՝ առաջարկվեց իրականացնել եռակողմ ֆորմատով այցելություններ մարզեր, հանդիպումներ կազմակերպել մարզպետների և համայնքների ղեկավարների հետ՝ ներկայացնելու գործող օրենսդրությունը, «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրը, այնուհետև թե ինչ խնդիրներ կան ոլորտում և ինչ պարտավորություններ ունի պետությունը:
- Առաջարկվեց նաև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոկտեմբերի 7-ին նշվում է Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի հռչակած արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների օրերը, օրինակ կազմակերպել եռակողմ ֆորմատով ինչ-որ կոնֆերանս կամ ինչ-որ միջոցառում, որտեղ կներկայացվի «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագրի մասին, արհմիությունների դերի և կարևորության մասին: Առաջարկվեց նաև, որպեսզի «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրը շրջաբերականով ուղարկվի բոլոր պետական մարմիններին, մարզպետարաններին (վերջիններիս կողմից էլ համայնքների ղեկավարներին):
- Բարձրացրեց նաև Հանձնաժողովի կազմում Ֆինանսների նախարարության ներկայացուցչի վերաբերյալ հարցը: Մասնավորապես հստակեցվել է արդեն Ֆինանսների նախարարության ներկայացուցչի՝ Հանձնաժողովի կազմում ներգրավվածության խնդիրը և արդյոք արդեն Ֆինանսների նախարարությունից ներկայացվել է Հանձնաժողովի անդամի թեկնածություն:

Հանձնաժողովի անդամ Գագիկ Մակարյանը նշեց, որ Գործատուների հանրապետական միությունը ևս ունի առաջարկներ օրակարգի «Այլ հարցեր» կետի շրջանակներում: 1-ին հարցը վերաբերում է «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագրին (մասնավորապես, թե ինչ զարգացումներ կան), 2-րդը՝ աշխատանքի տեսչության հետ կապված խնդիրներին, իսկ 3-րդը՝ Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին համաձայնագրին (մասնավորապես նշվեց, որ համապատասխան մեթոդաբանության մշակման խնդիր կար և ցանկանում են տեղեկանալ այդ մեթոդաբանության ընթացքի մասին):

Գ. Մակարյանի և Ա. Ասատրյանի կողմից ներկայացված հարցերից հետո Հանձաժողովի նախագահ Զ. Բաթոյանն առաջարկեց, որպեսզի Ա. Ուդումյանը ներկայացնի որոշակի տեղեկատվություն ԱՍՀՆ կողմից իրականացված աշխատանքների, բարձրացված հարցերի վերաբերյալ:

Ա. Ուդումյանը ևս կարևորեց Ա. Ասատրյանի կողմից բարձրացված հանրային իրազեկման հարցը և նշեց, որ այդ ուղղությամբ միջոցառումների կազմակերպման հարցում հնարավոր է ակնկալել նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) օժանդակությունը: Այդ առումով մարզային հանդիպումներ իրականացնելու գաղափարը Ա. Ուդումյանի կողմից ևս ընդունելի էր:

Սակայն ՏԻՄ-երին «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրն ուղարկելու առաջարկի առնչությամբ Ա. Ուդումյանը նշեց, որ փաստաթուղթն ուղղակի ուղարկելը այնքան էլ նպատակահարմար չէ: Շեշտն առավելապես պետք է դնել իրազեկման աշխատանքների վրա:

Հոկտեմբերի 10-ին համապատասխան միջոցառումներ իրականացնելու առաջարկության կապակցությամբ Ա. Ուդումյանը տեղեկացրեց, որ ԱՄԿ 100-ամյակի և վերջինիս «Աշխատանքի ապագան» նախաձեռնության շրջանակներում նախնական պայմանավորվածությամբ ԱՄԿ-ից պատվիրակություն է լինելու Հայաստանում, որի շրջանակներում կկազմակերպվեն այցեր և միջոցառումներ, որոնց մասին, անշուշտ, կտեղեկացվի նաև սոցիալական գործընկերներին: Միաժամանակ նա նշեց, որ գործընկերները կարող են քննարկել նաև Ա. Ասատրյանի նշած կոնֆերանսի մասնակցության հարցը:

Հայ-բուլղարական համաձայնագրի առնչությամբ Ա. Ուդումյանը տեղեկացրեց, որ համաձայնագրի համաձայն՝ բուլղարական կողմի հետ քննարկվել և որոշվել է Կողմերի լիազորված մարմինների (ՀՀ-ում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) 5-ական ներկայացուցիչներից բաղկացած համատեղ համակարգող հանձնաժողովի կազմը: Համաձայնագրի համաձայն՝ կողմերի իրավասու հաստատությունները (ՀՀ-ում՝ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալություն) ձևավորել են 4-ական ներկայացուցիչներից բաղկացած՝ պոտենցիալ աշխատողների (թեկնածուների) ընտրության համատեղ հանձնաժողով: Նշվեց նաև, որ բուլղարական կողմը պետք է ուղարկի իր ռազմավարությունը, որը վերջնական դեռ չի ներկայացվել պաշտոնապես: Նշվեց նաև, որ հետագա գործընթացների վերաբերյալ գործընկերները կտեղեկացվեն:

«Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագրի մասով Ա. Ուդումյանը տեղեկացրեց, որ 3 հիմնական զարգացումներ կան:

- 1-ինը նվազագույն աշխատավարձի փոփոխությունն է, որ նախաձեռնվել է դարձնել 68000:
- Աշխատանքի տեսչության մարմնի հետ կապված խնդրի մասով Ա. Ուդումյանը տեղեկացրեց, որ կա պայմանավորվածություն «Իմ քայլը» դաշինքի մի խումբ պատգամավորների հետ: Պատգամավորները հանդես են գալու օրենսդրական նախաձեռնությամբ, որի շրջանակներում փոփոխություններ են նախատեսվելու ՀՀ աշխատանքային օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում: Նշված փոփոխություններից հետո համապատասխան փոփոխություններ կնախատեսվեն նաև Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործառույթներում՝ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության մասով: Տեղեկացվեց նաև, որ ԱՍՀՆ-ն ակտիվ աշխատում է նաև ԱՄԿ Մոսկվայի գրասենյակից Վալենտին Մոկանոյի հետ: Մասնավորապես տեղեկացվեց, որ վերջինիս հետ քննարկումները վերաբերում են նաև տեսչական մարմնի համար օրենքի նախագծին:

- Աշխատանքային օրենսդրության փոփոխությունների հետ կապված, տեղեկացվեց, որ ձևավորվել է աշխատանքային խումբ, որում ներառված են նաև սոցիալական գործընկերները:

Տեղեկացվեց նաև, որ Հանձնաժողովում Ֆինանսների նախարարության ներկայացուցչի ներկայացվածության հետ կապված նոր զարգացումներ ներկա պահին դեռ չկան:

Ա. Ուդումյանի կողմից վերոնշյալ տեղեկատվության ներկայացումից հետո Հանձնաժողովի նախագահ Զ. Բաթոյանը կարևորեց սոցիալական գործընկերների հետ հետադարձ կապի շարունակական ապահովման անհրաժեշտությունը և սոցիալական գործընկերների միջև ոլորտում իրականացված քայլերի մասին տեղեկատվության փոխանակումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ էության, օրակարգի «Այլ հարցերի» շրջանակներում քննարկման ենթակա հարցերն արդեն ներկայացվեցին՝ Հաձնաժողովի նախագահն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը հարցերի հետևյալ հերթականությամբ.

1. **Այլ հարցեր**
2. **Հայաստանի Հանրապետությունում Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծի ներկայացում և քննարկում**
3. **Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համահունչ մեծության գնահատման վերաբերյալ հետազոտության ներկայացում և քննարկում**
4. **Աշխատանքի միջազգային կազմակերպության մասնակցությամբ Հայաստանի գործատուների հանրապետական միության 10-րդ Ազգային կոնֆերանսի մասին (29.10.2019թ)**

Օրակարգի հարցերի քննարկման հաջորդականության վերաբերյալ առարկություններ չներկայացվեցին և Հանձնաժողովը հաստատեց նիստի օրակարգը վերևում նշված հերթականությամբ:

<u>2.</u> Հայաստանի Հանրապետությունում Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծի ներկայացում և քննարկում

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ԱՍՀՆ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ Սոֆի Բոստանչյանը:

Նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագիծը (այսուհետ՝ Ռազմավարության նախագիծ) մշակվել է ԱՍՀՆ կողմից՝ մասնակցային սկզբունքով ներգրավելով ոլորտի բոլոր շահեկիցներին:

Ռազմավարության նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել ԱՍՀՆ, պետական այլ գերատեսչությունների և կառույցների, միջազգային և տեղական գործընկերների կողմից իրականացված գենդերային խնդիրների գնահատման հետազոտությունները, կազմված վերլուծական զեկույցներն ու հաշվետվությունները, հանրային քննարկումների արդյունքները, ներկայացված բազմաթիվ առաջարկները:

Նշվեց, որ Ռազմավարությունը սահմանում է գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Ռազմավարության մշակման շրջանակներում կարևորվել են նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները:

Տեղեկացվեց, որ Ռազմավարության շրջանակներում առանձնացվել են 5 գերակա ուղղություններ՝ համապատասխանաբար նշելով նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները:

Նշվեց, որ Ռազմավարությունն իրականացվելու է 2019-2023 թվականների համար ներկայացվող գործողությունների ծրագրին համապատասխան:

Գերակա ուղղություններն առանձնացվել են երկրում առկա գենդերային խնդիրների վիճակագրական տվյալները հաշվի առնելով: Արձանագրված ցուցանիշներով պայմանավորված առկա խնդիրները տարբեր ոլորտներում են: Ներկայացվեցին դրանց մի մասը.

- կանանց տնտեսական ակտիվության մակարդակը համեմատաբար ավելի ցածր է տղամարդկանց տնտեսական ակտիվության մակարդակից.
- կանանց միջին աշխատավարձը ցածր է տղամարդկանց աշխատավարձից 32.5 %-ով.
- եկամուտների մասով տարբերությունը էլ ավելի մեծ է և հասնում է մինչև 40%-ի.
- տնային տնտեսությամբ զբաղվողների 98.5%-ը կանայք են, ընդ որում, այդ կանանց 42.4%-ն ունի բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն.
- կանայք հիմնականում զբաղված են առավել ցածր վարձատրվող ոլորտներում.
- կանայք ավելի հաճախ ներգրավված են միջին և ցածր պաշտոններում, նույնիսկ այն ոլորտներում, որտեղ ավելի մեծ ներգրավվածություն ունեն.
- ՀՀ-ում նորածինների սեռերի համամասնությունը խախտվել է դեռևս վաղ՝ 1990-ականներից և 2018թ. տվյալներով կազմում է 111.1 տղա՝ 100 աղջկա դիմաց:

Այնուհետև թվարկվեցին Ռազմավարության 5 գերակա ուղղությունները: Մասնավորապես.

- կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում.
- սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց տնտեսական հնարավորությունների ընդյալնում.
- կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության և հավասար հնարավորությունների ընդյալնում կրթության ու գիտության ոլորտում.
- առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդլայնում.
- գենդերային խտրականության կանխարգելում:

Այնուհետև համառոտ ներկայացվեցին վերոնշյալ գերակա ուղղություններից յուրաքանչյուրի հիմնական նպատակները, այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերը:

Փաստաթղթի ներկայացուցմից հետո Հանձնաժողովի նախագահ, ԱՍՀ նախարար Զ. Բաթոյանն առաջարկեց, որպեսզի ԱՍՀ նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանը որոշակի տեղեկատվություն տրամադրի այն մասին, թե ներկա պահին որ փուլում է նախագիծը և գործընկերները ինչպիսի հնարավորություն ունեն առաջարկներ ներկայացնելու:

Ժ. Անդրեասյանը տեղեկացրեց, որ Ռազմավարության նախագիծը բավականին երկար ժամանակ լրամշակվել է, անցել է քննարկումների մեծ շարք ամենատարբեր խմբերի ու պետական մարմինների հետ: Տեղեկացվեց նաև, որ ներկայում լրամշակված նախագիծը ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ:

Ժ. Անդրեասյանը նշեց նաև, որ ներկայացված փաստաթղթում ձևակերպումները բավականին ճկուն են, նշված են գործողությունների ուղղությունները, ինչը նաև նշանակում է, որ առանձին ծրագրեր իրականացնելու և առաջարկելու մեծ հնարավորություններ կան: Հաշվի առնելով Հանձնաժողովի մանդատը՝ Ժ. Անդրեասյանն առաջարկեց ուշադրությունը կենտրոնացնել կանանց սոցիալ-տնտեսական հզորացման գերակայության վրա: Նա նշեց, որ այդ մասով բարձրացված բազմաթիվ խնդիրներ կան և Ռազմավարությունը բավականին լավ շրջանակ է, որի ներքո գործընկերները կարող են տարբեր ծրագրերը միավորել և ունենալ հավելյալ շատ ավելի մեծ արդյունք: Ժ. Անդրեասյանը իր խոսքում թվարկեց նաև նախագծում բարձրացված մի շարք խնդիրներ ևս, որոնք առնչվում են Հանձնաժողովի մանդատին, և որոնք պահանջում են նոր մոտեցումներ, իրավական դաշտի, իրականացման մեխանիզմների լուծումներ, ինչի արդյունքում կապահովվի, թե՛ աշխատանքային իրավունքների պաշտպանվածության մասով ավելի լավ իրավիճակ, թե՛ նաև բարենպաստ միջավայր՝ կանանց տնտեսական ակտիվության խրախուսման համար:

Ռազմավարության նախագծի ներկայացումից հետո ներկայացվեցին կարծիքներ, դիտարկումներ և առաջարկություններ, ծավալվեց քննարկում:

Արդարադատության նախարարությունից Հանձնաժողովի անդամի մշտական փոխարինող, Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ Անահիտ Անտոնյանը հայտնեց այն կարծիքը, որ այն պարագայում, երբ արդեն Ռազմավարության նախագիծը ներկայացված է Վարչապետի աշխատակազմ, վերջինիս քննարկման նպատակը Հանձնաժողովում այնքան պարզ չէ:

Հանձնաժողովի անդամ Գ. Մակարյանը ևս համաձայնեց Ա. Անտոնյանի կարծիքի հետ և նշեց, որ իր կարծիքով ևս իրավական ակտերի նախագծերը պետք է Հանձնաժողովի կարծիքին ներկայացվեն մինչև Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը: Գ. Մակարյանը միաժամանակ ներկայացրեց իր դիտողությունները Ռազմավարության նախագծի վերաբերյալ: Մասնավորապես.

1. Սահմանադրությամբ օգտագործվում են «կին» և «տղամարդ» հասկացությունները, այլ ոչ թե «գենդեր» հասկացությունը: Այդ առումով վերջինիս կարծիքով Ռազմավարության նախագիծը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը:

2. Ռազմավարության նախագծում տնտեսական կոմպոնենտը թույլ է: Այն պետք է ուժեղացվի:
3. Կան շրջանառության մեջ դրված մի քանի հայեցակարգեր: Օրինակ, ՓՄՁ զարգացման ռազմավարությունը: Պետք է այդ բոլոր փաստաթղթերը ներդաշնակեցվեն:
4. Վերջերս (երեք շաբաթ առաջ) UNDP-ի և Շվեյցարիայի դեսպանության աջակցությամբ տեղի է ունեցել կանանց տնտեսական դերակատարության հզորացմանն ուղղված քննարկում, ներկայացվել են վերլուծական տվյալներ, որոնք էականորեն տարբերվում են Ռազմավարության նախագծում ներկայացված տվյալներից: Անհրաժեշտ է հասկանալ ինչու է առկա նման տարբերություն, և որ տվյալներն են առավել հավաստի: Անհրաժեշտ է հստակեցնել այդ խնդիրը:

Վերոնշյալ կարծիքների առնչությամբ Ժ. Անդրեասյանը տեղեկացրեց, որ Ռազմավարության նախագիծը բազմիցս քննարկվել է ամենատարբեր ձևերով և ամենատարբեր հարթակներում, եղել են հանրային քննարկումներ, Ռազմավարության նախագծի մասին իրազեկում իրականացվել է նաև ամենատարբեր սոցիալական ցանցերով, ինչպես նաև այն տեղադրվել է e_draft.am կայքում: Ժ. Անդրեասյանը միաժամանակ տեղեկացրեց, որ փաստաթուղթը հասանելի է առցանց հարթակում, և ցանկության դեպքում կողմերը կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները: Նա նաև նշեց, որ իր խոսքում թվարկվեցին այն ուղղությունները, որոնց շուրջ կարող են քննարկումներ ծավալվել, առաջարկներ ներկայացվել հետագա անելիքների վերաբերյալ:

Անդրադառնալով «գենդեր» հասկացության օգտագործման վերաբերյալ Գ. Մակարյանի կողմից ներկայացված դիտողությանը՝ Ժ. Անդրեասյանը նշեց, որ այն օգտագործվում է դեռևս 2013 թվականից՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքում:

Ժ. Անդրեասյանը միաժամանակ ընդգծեց, որ, եթե կա հավելյալ քննարկումների կարիք, ապա ԱՍՀՆ-ն միշտ պատրաստ է լսել բոլոր կարծիքներն ու առաջարկությունները: Նա առաջարկեց նաև, որ նախագծի վերաբերյալ հավելյալ դիտողություններն ու առաջարկությունները նիստի մասնակիցները ներկայացնեն նաև գրավոր, որոնք բոլորը կքննարկվեն:

ԱՍՀ նախարար, Հանձնաժողովի նախագահ Զ. Բաթոյանը, անդրադառնալով Վարչապետի աշխատակազմ ներկայացված լինելու պարագայում Հանձնաժողովի նիստի օրակարգում Ռազմավարության նախագիծը ներառելու հարցին՝ նշեց, որ օրակարգում հարցն ընդգրկելը բխում է այն հանգամանքից, որ ԱՍՀՆ-ն կարևորում է նշված խնդիրը: Հանձնաժողովի նախագահը միաժամանակ նշեց, որ Հանձնաժողովում հարցի քննարկման նպատակը հետագա համագործակցության ճանապարհների մատնանշումն ու Ռազմավարության գործողությունների իրականացման համար քայլերի քննարկումն է: Ուստի այս իմաստով ևս պակաս կարևոր չէ գործընկերներին այդ մասին իրազեկելը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց նաև, որ եթե Հանձնաժողովում քննարկվող հարցերի ֆորմատի խնդիր կա, ապա Հանձնաժողովը կարող է նաև դա քննարկել և որոշել, թե ինչպիսի հարցերի քննարկումն է Հանձնաժողովի կողմից ընդունելի, որոնք իմաստ ունի լսել Հանձնաժողովում և որոնք ոչ:

Հանձնաժողովի նիստին Հանձնաժողովի անդամ Սեդրակ Ասատրյանի փոխարեն մասնակցող Արթուր Հովհաննիսյանն առաջարկեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռազմավարության նախագիծը Վարչապետի աշխատակազմում դեռևս չի քննարկվել համապատասխան կոմիտեում, Հանձնաժողովում ներկայացված կողմերը իրենց դիրքորոշումները փաստաթղթի վերաբերյալ գրավոր ներկայացվեն ԱՍՀՆ, իսկ վերջինս դրանք քննարկելու համար ժամանակ խնդրի Վարչապետի աշխատակազմից, լրամշակի Ռազմավարության նախագիծը, որից հետո արդեն փաստաթղթի լրամշակված տարբերակը ներկայացնի համապատասխան կոմիտեի քննարկմանը, իսկ այնուհետև Կառավարության նիստի քննարկմանը:

ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանը ևս կարևորեց վերոնշյալ փաստաթղթի քննարկումը Հանձնաժողովում: Նրա կարծիքով ևս, անկախ այն հանգամանքից, որ փաստաթուղթն արդեն ներկայացված է Վարչապետի աշխատակազմ, վերջինս քննարկումը Հանձնաժողովում չի կարող համարվել ժամանակավրեպ, քանի որ այն անդրադառնում է կարևոր խնդիրների, որոնց մասին իրազեկումն ու համագործակցության ուղղությունների ձևավորումը ԱՍՀՆ-ն շատ կարևորում է: Նա նշեց նաև, որ եթե գործընկերների կարծիքով կան հստակեցման կամ լրամշակման ենթակա մասեր, ապա գործընկերները այդ մասին առաջարկությունները կարող են ներկայացնել նաև գրավոր, որոնք կքննարկվեն ԱՍՀՆ-ի կողմից:

Էկոնոմիկայի նախարարությունից Հանձնաժողովի նիստին մասնակցող Գևորգ Մամիկոնյանի կողմից հնչեցվեցվեցին հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է ակնկալվում ստանալ Ռազմավարության իրականացման արդյունքում. այսինքն, որո՞նք են փաստաթղթով նախանշվող թիրախները:
2. 2019 թվականի համար ի՞նչ միջոցառումներ են նախատեսված, և ինչպե՞ս են դրանք իրականացվելու:

Գևորգ Մամիկոնյանի կողմից բարձրացված հարցերի առնչությամբ Ժ. Անդրեասյանը նշեց, որ Ռազմավարության նախագծում նախատեսված են նաև արդյունքային ցուցանիշներ՝ ըստ առանձին գերակայությունների:

2019 թվականի համար նախատեսված միջոցառումների մասով Ժ. Անդրեասյանը տեղեկացրեց, որ Ռազմավարության նախագծի մշակման ժամանակ քննարկումներ են իրականացվել նաև այլ պետական մարմինների հետ և միջոցառումները սահմանվել են նրանց հետ համաձայնեցման արդյունքում ևս: Ուստի, միջոցառումների ժամանակացույցերը, գործողությունները, ցուցանիշները ամբողջությամբ փոխհամաձայնեցված են բոլոր այն նախարարությունների հետ, որտեղ վերջիններս անելիքներ ունեն:

Հանձնաժողովի անդամ Բ. Խարատյանի կողմից բարձրացված հարցը վերաբերում էր Ռազմավարության նախագծի 5-րդ բաժնում 5-րդ գերակայության «ը» ենթակետում օգտագործված «սեռական տարբեր խմբերին պատկանող կանայք և աղջիկներ» արտահայտությանը: Մասնավորապես, թե ինչ պետք է հասկանալ այդ արտահայտության տակ:

Բ. Խարատյանի կողմից բարձրացված հարցի առնչությամբ ԱՍՀ նախարար, Հանձնաժողովի նախագահ Զ. Բաթոյանը նշեց, որ եթե գործընկերները այդ հատվածում տեքստի ճշտման, խմբագրման հետ կապված խնդիր են տեսնում, ապա պետք է վերանայել այդ հատվածը և հասկանալ խնդիրն ինչում է: Եթե գրված հատվածում նկատի չի ունեցվել այն ինչ նշված է, ապա պետք է այդ իմաստով նշված հատվածը վերանայվի: ԱՍՀ նախարարը միաժամանակ նշեց, որ ծառայությունների և խտրականության մասին խոսելիս, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ եթե աջակցության կարիք ունեցող անձը դիմել է ԱՍՀՆ, ապա նախարարությունը պարտավոր է տրամադրել անհրաժեշտ աջակցությունը՝ անկախ սեռից, սեռական կողմնորոշումից կամ որևէ այլ հանգամանքից: Նախարարության համար, որևէ խտրական մոտեցում չի կարող հիմնված լինել սեռի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա:

Ամփոփելով օրակարգի 2-րդ հարցի շուրջ ծավալված քննարկումները՝ օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. **Հայաստանի Հանրապետությունում Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի կողմերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնեն իրենց գրավոր առաջարկությունները, որոնք կամփոփվեն ԱՍՀՆ-ում, որից հետո ևս մեկ անգամ կշրջանառվեն Հանձնաժողովի կողմերի միջև և վերջիններիս համաձայնությունը ստանալուց հետո կներկայացվեն Վարչապետի աշխատակազմ:**

<u>3.</u> Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համահունչ մեծության գնահատման վերաբերյալ հետազոտության ներկայացում և քննարկում

Անդրադառնալով օրակարգի 3-րդ՝ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի համահունչ մեծության գնահատման վերաբերյալ հետազոտության ներկայացման և քննարկման վերաբերյալ հարցին՝ Հանձնաժողովի նախագահը դիմեց ներկաներին, թե արդյոք կարիք կա ներկայացնելու հարցի վերաբերյալ տեսազեկույցը:

Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին զեկույցը չներկայացնել, սակայն հարցի շուրջ ներկաները ներկայացրեցին համապատասխան կարծիքներ և դիտարկումներ:

Հանձնաժողովի անդամ Ս. Ասատրյանի փոխարեն նիստին մասնակցող Արթուր Հովհաննիսյանն առաջարկեց, որպեսզի Հանձնաժողովի անդամները ՀՀ ԱԺ-ում համապատասխան քննարկումներից առաջ ներկայացնեն իրենց գրավոր առաջարկությունները, որոնք ԱՍՀՆ ներկայացուցչի կողմից կհնչեցվվեն ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովում հարցի քննարկման ժամանակ:

Հանձնաժողովի անդամ Բ. Խարատյանը վերոնշյալ հետազոտության վերաբերյալ նշեց, որ նվազագույն ամսական աշխատավարձի չափի որոշման համար առաջին հերթին պետք է

հաշվի առնվեն ԱՄԿ թիվ 131 կոնվենցիայի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Սոցիալական և տնտեսական եվրոպական դաշնագրի (որոնք վավերացվել են ՀՀ-ի կողմից) դրույթները: Մասնավորապես, նշված փաստաթղթերում ամրագրված է, որ յուրաքանչյուր պետություն պետք է նվազագույն աշխատավարձի սահմանման ժամանակ հաշվի առնի երկու գործոն: Դրանք են՝ 1. աշխատողի և նրա ընտանիքի անդամների պահանջմունքներ, 2. տնտեսական վիճակ:

Բ. Խարատյանը նշեց նաև, որ վերոգրյալից բացի 2019 թվականին ստորագրված «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագրում ևս կան նախատեսված դրույթներ, որոնցով սահմանված է, որ ՀՀ-ի կողմից նվազագույն ամսական աշխատավարձի սահմանման համար պետք է ամրագրվեն համապատասխան մեխանիզմներ: Բ. Խարատյանի կարծիքով հետազոտության արդյունքում հաշվարկի մեջ ընդգրկված չէ պահանջարկը, կյանքի գինը:

Արձագանքելով Բ. Խարատյանի հնչեցրած տեսակետին՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Սարգսյանը նշեց, որ հետազոտության մեջ ԱՄԿ թիվ 131 կոնվենցիայի մոտեցումն անշուշտ հաշվի առնված է: Հետազոտությունում օգտագործված մեթոդաբանությունն ունի հակակշիռ երկու կողմ՝ տնտեսական և սոցիալական: Հետազոտությունում վերցվել է վիճակագրորեն միջինացված ցուցանիշ, որպեսզի հաշվի առնվեն և՛ տնտեսական, և՛ սոցիալական գործոնները:

Բ. Խարատյանի կարծիքի առնչությամբ ԱՍՀ նախարար Զ. Բաթոյանը նշեց, որ անշուշտ պետք է ունենալ աշխատավարձի քաղաքականության սկզբունքներ, որոնց մշակման, հետագայում վերանայման համար պետք է հիմք ընդունվեն միջազգային չափանիշները, ինչպես նաև Բ. Խարատյանի կողմից նշած կյանքի գինը: Այսինքն, անկախ ՀՀ ԱԺ-ում քննարկման դրված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացում նախատեսող կոնկրետ նախագծից, հետագայում հաշվարկների մեխանիզմում պետք է դրվեն այդ սկզբունքները: Նախարարը նաև խնդրեց, որ կողմերը իրենց առաջարկությունները ներկայացնեն նաև գրավոր:

Գ. Մակարյանն էլ կարևորեց նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանելիս ոչ միայն պետական բյուջեի, այլ նաև մասնավոր սեկտորի հնարավորությունները հաշվի առնելու հարցը: Վերջինս միաժամանակ նշեց, որի իր կարծիքով ներկայացված փաստաթուղթն անհրաժեշտ է քննարկել բոլոր մակարդակներում աշխատավարձի քաղաքականության շրջանակում, այլ ոչ թե առանձին և պետք է հաշվի առնել տնտեսական բլոկը ևս: Ներկայացված տեսակետի շրջանակներում հնչեցվեցին հետևյալ հարցերը.

1. Արդյո՞ք ԱՍՀՆ-ն մտադիր է ներկայացված փաստաթուղթը քննարկել աշխատավարձի քաղաքականության շրջանակներում:
2. Ո՞ր գործատուների շրջանում և ո՞ր ոլորտներում են իրականացվել հարցումներ, ինչի մասին նշված է հետազոտության մեջ: Նշված հարցը կարևորվում է այն իմաստով, որ ոլորտներից կախված բնականաբար տարբեր են նաև գործատուների հնարավորությունները՝ ավելի բարձր չափի աշխատավարձ վճարելու համար:

Գ. Մակարյանի կողմից բարձրացված այն հարցին, թե որ գործատուների շրջանում և որ ոլորտում են իրականացվել հետազոտությունները «Աշխատանքի և սոցիալական

հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Սարգսյանը տեղեկացրեց, որ հարցումն իրականացվել է գործատուների հետազոտության շրջանակներում: Առանձին հետազոտություն որպես այդպիսին չի իրականացվել, այլ հարցաթերթում ներառվել են նաև նվազագույն աշխատավարձի հետ կապված 3-4 հարց, մասնավորապես հետևյալ բնույթի հարցեր. ինչքա՞ն կարող է լինել նվազագույն աշխատավարձի չափը, ի՞նչ տնտեսական, իրավական խնդիրներ կունենա գործատուն նվազագույն աշխատավարձի բարձրացումից: Բացի այդ, հարցաթերթում նախատեսված է եղել նաև հատված առաջարկություններ ներկայացնելու համար: Ա. Սարգսյանը նշեց նաև, որ հետազոտությունն իրականացվել է տնտեսության տարբեր ճյուղերի գործատուների շրջանում: Հարցված գործատուների շատ փոքր մասն է, որ չի համաձայնվել նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ, շատ ավելի էական մասն էլ ընդունել է, որ պետք է բարձրանա նվազագույն ամսական աշխատավարձը, հարցվածների ոչ շատ մեծ մասն էլ ասել է, որ դժվար թե նվազագույն աշխատավարձի բարձրացումը իրենց ֆինանսական որևէ խնդրի առաջ կանգնեցնի:

Արման Սարգսյանը միաժամանակ նշեց, որ փաստաթղթի շրջանակներում հստակ դիտարկվել է նաև կյանքի գինը և նաև դրանից ելնելով է գնահատվել նվազագույն աշխատավարձի չափը:

Անդրադառնալով նվազագույն աշխատավարձը աշխատավարձի քաղաքականության շրջանակներում դիտարկելու վերաբերյալ Գ. Մակարյանի առաջարկությանը Հանձնաժողովի նախագահ Զ. Բաթոյանը նշեց, որ, անշուշտ, վերջիններս պետք է դիտարկվեն համակարգային և համընդհանուր տրամաբանության մեջ լինեն: Սակայն, հաշվի առնելով, որ այս անգամ նախաձեռնությունը ԱՍՀՆ-ի կողմից չի եղել, այլ այն ԱԺ պատգամավորների նախաձեռնությունն է, Զ. Բաթոյանը նշեց, որ այս փուլում դժվար կլինի ասել, թե որքանով հնարավոր կլինի գնալ այդ մոտեցմամբ:

Օրակարգի 3-րդ հարցի շուրջ քննարկումները ամփոփելով՝ օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

3.1. Եթե կողմերն ունեն առաջարկություններ նվազագույն աշխատավարձի բարձրացման վերաբերյալ ներկայացված առաջարկության առնչությամբ, ապա այդ առաջարկությունները գրավոր ներկայացվեն ԱՍՀՆ, որոնք այնուհետև կներկայացվեն Ազգային ժողովում համապատասխան հանձնաժողովում հարցի քննարկման ժամանակ:

<u>4.</u> Աշխատանքի միջազգային կազմակերպության մասնակցությամբ Հայաստանի գործատուների հանրապետական միության 10-րդ Ազգային կոնֆերանսի մասին (29.10.2019թ)

Օրակարգի 4-րդ հարցի շրջանակներում Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գ. Մակարյանը տեղեկացրեց, որ միությունը յուրաքանչյուր տարի կազմակերպում է սոցիալական գործընկերությունը, եռակողմ գործընկերությունը խթանելուն և այդ մասին իրազեկելուն ուղղված կոնֆերանս: Նշվեց, որ 29.10.2019թ. լինելու է թվով 10-րդ

կոնֆերանսը, որը լինելու է աշխատանքի ապագայի կոնտեքստում և լինելու են քննարկումներ ու ելույթներ աշխատանքային իրավունքների, աշխատանքի պաշտպանության, աշխատանքի տեսչության, արժանապատիվ աշխատանքի մասին: Տեղեկացվեց նաև, որ ԱՄԿ Մոսկվայի գրասենյակի ղեկավարը ևս նախնական հաստատել է իր մասնակցությունը: Բացի այդ մասնակցություն է լինելու նաև ԱՄԿ Ժնևի գրասենյակից:

Գ. Մակարյանը միաժամանակ առաջարկեց, որպեսզի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ևս կոնֆերանսում ներկայացվեն քննարկվելիք հարցերի վերաբերյալ զեկույցներ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կոնֆերանսին մասնակցելու և զեկույցներով հանդես գալու Գ. Մակարյանի առաջարկության կապակցությամբ Զ. Բաթոյանը նշեց, որ նախարարությունից անպայման կլինի մասնակցություն և անհրաժեշտ հարցերը կքննարկվեն աշխատանքային կարգով:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

4.1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**